Տրանսատլանտյան Նախաձեռնությունների Հայկական Կենտրոն

Armenian Center for Transatlantic Initiatives

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱՏՕ-Ի ՀԵՏ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Ուժի մեջ է մտել 2005թ. դեկտեմբերին

Երևան - 2007

ՆԱԽԱԲԱՆ

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

1.1. Եվրոատլանտյան կառույցների ու հաստատությունների հետ համագործակցության խորացում

Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական նպատակը եվրոպական կառույցներին ու հաստատություններին լիարժեք ինտեգրումն է: Հայաստանը նաեւ մտադիր է աշխուժացնել գործնական եւ քաղաքական համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ՝ Դաշինքին ավելի մերձենալու նպատակով: Այս առնչությամբ կարեւոր գործիքներ կհանդիսանան Պաշտպանական հաստատությունների կառուցման գործընկերության գործողության ծրագիրը (ՊՀԿ ԳԳԾ), Պլանավորման եւ վերանայման գործընթացը, ինչպես նաեւ Դաշնակիցների հետ խորհրդակցությունները:

1.2. Հարաբերություններ հարեւանների հետ

Հայաստանը ցանկանում է նպաստել Կովկասում տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը եւ հաստատակամ է բոլոր հարեւանների հետ հարաբերությունների կառուցողական զարգացման եւ բարելավման գործում: Հայաստանը կաշխատի Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ եւ լիովին կաջակցի այդ խնդրում ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերին: Հայաստանը ձգտում է Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանը եւ հաստատակամ է հետամուտ լինել Թուրքիայի հետ կառուցողական երկխոսության, ներառյալ այդ նպատակով ուղղակի շփումները Թուրքիայի հետ:

1.3. Ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, օրենքի իշխանություն, պայքար կոռուպցիայի դեմ

Հայաստանը որդեգրել է ժողովրդավարական բարեփոխումների, մարդու իրավունքների պաշտպանության, օրենքի գերակայության, թափանցիկության եւ կոռուպցիայի դեմ պայքարի գործում հետագա առաջընթաց ապահովելու ուղեգիծ: Հայաստանը նպատակ ունի մասնավորապես սահմանադրական, ընտրական եւ իրավական բարեփոխումների միջոցով ամրապնդել միջազգային չափանիշներին համապատասխան ժողովրդավարական հաստատություններն ու գործընթացները՝ հետամուտ լինելով լիովին համապատասխանել միջազգայնորեն ճանաչված չափանիշներին: Հայաստանը հաստատակամ է կոռուպցիայի դեմ պայքարում եւ նպատակ ունի իրականացնել գործնական քաղաքականություն՝ թափանցիկ ու լայնորեն հիմնավորված պատասխանատվության մեխանիզմներ մշակելու համար, ինչպես նաեւ կատարելագործել հասարակական պաշտոնյաների ուսուցումն ու իրազեկումը:

1.4. Ճգնաժամերի կառավարում, պայքար ահաբեկչության եւ կազմակերպված հանցավորության դեմ

Հայաստանը ցանկություն ունի վերանայել ճգնաժամերի կառավարման իր մեխանիզմներն ու ընթացակարգերը՝ դրանք կատարելագործելու նպատակով:

1.5. Պայքար ահաբեկչության եւ կազմակերպված հանցավորության դեմ

Հայաստանը մտադիր է ընդլայնել իր կարողություններն ահաբեկչության եւ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի, ինչպես նաեւ ահաբեկչության եւ կազմակերպված հանցավորության գործողությունների հետեւանքների կառավարման ոլորտներում: Հիմնվելով այս բնագավառում ՆԱՏՕ-ի հետ առկա համագործակցության վրա՝ Հայաստանը պատրաստ է ավելի ակտիվորեն ընդգրկվել համապատասխան ծրագրերում եւ միջոցառումներում, ինչպիսին է «Ահաբեկչության դեմ գործընկերության գործողություն» ծրագիրը, ներառյալ համապատասխան հետախուզական տեղեկատվության փոխանակումը: Հայաստանը նպատակ ունի նաեւ շարունակել օրենսդրական բարեփոխումներն ու գործնական միջոցներ ձեռնարկել կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու համար:

1.6. Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողություն

Հայաստանը ձգտում է զարգացնել ու ամրապնդել Զինված ուժերի ժողովրդավարական եւ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմները, նպաստել պաշտպանական եւ անվտանգության քաղաքականության մշակման գործում քաղաքացիական մասնագետների եւ հասարակական շրջանակների ներգրավմանը: Այդ նպատակով Հայաստանը հատուկ կարեւորում է

պաշտպանության եւ անվտանգության հարցերում քաղաքացիական հասարակության ընդգրկումը, եւ խորհրդարանականների եւ իրենց աշխատակազմերի ուսուցումն ու կատարելագործումը:

1.7. Տնտեսական զարգացում

Հայաստանը ձգտում է առողջ, կայուն եւ մրցունակ տնտեսական զարգացման: Այս առումով առաջնահերթություններ են դիտվում եվրոպական չափանիշների համաձայն թափանցիկ շուկայական տնտեսվարումը, ներքին եւ արտաքին տրանսպորտային ենթակառույցների զարգացումը, հնարավորինս անկախ էներգետիկ համակարգի կառուցումը, արտաքին ներդրումների խթանումը եւ նրանց համար հավասար իրավունքների ապահովումը, պետական ֆինանսական ռեսուրսների եւ (կամ) օտարերկրյա վարկային միջոցների ոչ նպատակային օգտագործման կանխումը:

1.8. Միջազգային կազմակերպություններ

Հետամուտ լինելով Եվրոպական կառույցներին ու հաստատություններին ինտեգրմանը, Հայաստանը նպատակ ունի ընդլայնել իր համագործակցությունը Եվրոպական Միության հետ եւ ձգտում է ավելի սերտ ինստիտուցիոնալ համատեղելիության՝ լիարժեք անդամակցումն այդ կառույցին համարելով գերակա նպատակ: Հայաստանը կշարունակի համագործակցել նաեւ ԵԱՀԿ-ի եւ Եվրոպայի Խորհրդի հետ եւ հաստատակամ է այս կազմակերպությունների համապատասխան չափանիշները կիրառելու գործում: Հայաստանը գիտակցում է երկրում գործող տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների կրկնակումը նվազեցնելու անհրաժեշտությունը:

2. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

2.1. Պաշտպանական եւ անվտանգության համակարգի բարեփոխում

Հայաստանը նպատակ ունի մշակել Ազգային անվտանգության ռազմավարություն եւ Պաշտպանական հայեցակարգ, որոնք կսահմանեն Զինված ՈՒԺերի եւ անվտանգության այլ կառույցների դերն ու առաքելությունը: Պաշտպանության եւ անվտանգության ոլորտների բարեփոխման նպատակների իրականացմանն օժանդակող լծակներ կհանդիսանան Պլանավորման եւ վերանայման գործընթացն ու Պաշտպանական հաստատությունների կառուցման գործընկերության գործողության ծրագիրը (ՊՀԿ ԳԳԾ):

2.2. Պաշտպանական պլանավորում

Հայաստանի Հանրապետության նպատակը պաշտպանական եւ բյուջետային համակարգերի կատարելագործումն է, ինչպես նաեւ կայուն, թափանցիկ եւ ֆինանսական առումով իրատեսական պաշտպանական պլանների մշակումը: Այդ նպատակով Հայաստանը մտադիր է այս բնագավառներում հիմնել փորձագիտական համակարգ, ինչը կօգնի ապագա Ռազմավարական պաշտպանական վերանայման արդյունքների մշակմանն ու իրագործմանը, ինչպես նաեւ Զինված ՈՒԺերի բարելավմանը՝ հրամանատարական-վերահսկողական, հանդերձավորման եւ թիկունքային ապահովման ոլորտներում: Հայաստանի Հանրապետությունը նպատակադրվել է նաեւ վերանայել իր ռազմարդյունաբերական համալիրը եւ մշակել դրա հետագա շահագործման վերաբերյալ առաջարկներ: Հայաստանը նախատեսում է վերանայել Պաշտպանության նախարարության անձնակազմի կառավարման համակարգը՝ զինվորական եւ քաղաքացիական անձնակազմի համար:

2.3. Ռազմական գործակցության եւ փոխգործունակության խնդիրներ

Հայաստանի Հանրապետությունը կշարունակի ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան մեկ խաղաղապահ գումարտակի կազմավորումը՝ այն հետագայում խաղաղապահ բրիգադի վերածելու նպատակով: Նախատեսվում է նաեւ ձեւավորել Օպերատիվ կարողությունների հայեցակարգի շրջանակներում ինքնագնահատողների խումբ, որը կիրականացնի ՆԱՏՕ-ի ղեկավարած ԳԽԽ գործողությունների համար հայտարարված ստորաբաժանումների ինքնագնահատում: Նպատակներից մեկն էլ ավագ սպաների պատրաստման դասընթացների մշակումն ու բոլոր զորատեսակների ամբողջ ուսումնական ծրագրի վերանայումն է:

2.4. Սահմանային անվտանգություն

Հայաստանի Հանրապետությունը մտադիր է վերանայել սահմանային անվտանգության

ներկայիս պրակտիկան եւ ընթացակարգերը՝ սահմանային անվտանգության կատարելագործման նպատակով: Այս վերանայման միջոցով կորոշվեն նաեւ կարիքները՝ առաջնային սարքավորումների տեսանկյունից:

3. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

3.1. Հասարակության իրազեկում

Հայաստանը նպատակ ունի ընդլայնել ՆԱՏՕ-ի, Գործընկերության եւ Դաշինքի հետ իր համագործակցության վերաբերյալ հասարակության իրազեկումը: Հայաստանը նաեւ նպատակադրել է ընդլայնել հասարակության իրազեկումը՝ պաշտպանական եւ անվտանգության համակարգերում իրականացվելիք բարեփոխումներին աջակցություն ստանալու նպատակով:

3.2. Գիտություն, Արդի հասարակության մարտահրավերների հանձնաժողով

Հայաստանը նպաստելու է Հարավային Կովկասի տարածաշրջանում անվտանգության ու համագործակցության հաստատմանը՝ մասնակցելով «Անվտանգություն գիտության միջոցով» ծրագրին:

3.3. Պատրաստվածություն քաղաքացիական ճգնաժամերին

Հայաստանը հաստատակամ է կատարելագործել արտակարգ իրավիճակների ոլորտում իր ունեցած պատրաստվածությունը եւ արտակարգ իրավիճակներին արձագանքելու կարողությունները՝ աղետներին եւ ասիմետրիկ սպառնալիքներին դիմակայելու նպատակով: Հայաստանը նպատակադրվել է մեծացնել սեփական կարողությունները եւ ընդլայնել կապերը ՆԱՏՕ-ի Աղետների արձագանքման համադրման Եվրոատլանտյան կենտրոնի հետ՝ աղետների հաղթահարման միջազգային գործողություններում իր ներդրումն ունենալու նպատակով:

4. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԵՎ «ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ» ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

4.1 Վարչական խնդիրներ

Հայաստանն անհրաժեշտ համադրում եւ փոխգործողության կարգավորումներ կիրականացնի այս Գործողությունների ծրագրի արդյունավետ իրագործման համար:

4.2 Պաշտպանողական անվտանգություն

Հայաստանը հաստատակամ է լիովին իրագործել ՆԱՏՕ-ի հետ առկա անվտանգության համաձայնագիրը:

4.3 Ռեսուրսներին առնչվող խնդիրներ

Հայաստանը մտադիր է անհրաժեշտ մարդկային եւ ֆինանսական ռեսուրսներ հատկացնել՝ այս Գործողությունների ծրագրով նախատեսված ծրագրերի ու գործողությունների իրականացմանը համապատասխան աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Գլուխ 1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

1.1 Եվրոպական եւ Եվրոատլանտյան կառույցների ու հաստատությունների հետ համագործակցության խորացում

1.1.1. Խորացնել համագործակցությունը Եվրոպական եւ Եվրոատլանտյան կառույցների ու հաստատությունների հետ

Գործող. 1. Որպես ԱԳԳԾ գործընթացի մաս՝ դաշնակիցների հետ իրականացնել 26Գ1 ձեւաչափով քաղաքական խորհրդակցություններ՝ անվտանգության եւ արտաքին քաղաքականության, ինչպես նաեւ տարածաշրջանային զարգացումներին առնչվող խնդիրների շուրջ:

1.1.2. Անվտանգության սպառնալիքների եւ ազգային պաշտպանության պահանջների գնահատման նպատակով մշակել արդյունավետ ու թափանցիկ կարգավորման մեխանիզմներ եւ ընթացակարգեր

Գործող. 1. Մշակել ազգային անվտանգության ռազմավարություն

Գործող. 2. Զարգացնել «Դրաստամատ Կանայան» ռազմավարական հետազոտությունների կենտրոնի հետազոտական եւ վերլուծական կարողությունները:

1.2 Հարաբերություններ հարեւանների հետ

1.2.1. Նպաստել տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը Կովկասում

Գործող. 1. Մեծացնել ԳԻԽ համապատասխան միջոցառումների տարածաշրջանային (Սեւծովյան, Հարավկովկասյան) բաղկացուցիչը՝ միաժամանակ պահպանելով ներգրավվածության սկզբունքը:

Գործող. 2. ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում աշխատել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ եւ Դաշնակիցներին տեղեկացնել զարգացումների մասին:

Գործող. 3. Հետամուտ լինել Թուրքիայի հետ կառուցողական երկխոսությանը:

1.3 Ժողովրդավարական բարեփոխումներ, օրենքի գերիշխանություն, պայքար կոռուպցիայի դեմ

1.3.1. ԵԱՀԿ-ի եւ Եվրոպայի Խորհրդի հետ շարունակել նախապատրաստել եւ իրականացնել ժողովրդավարական բարեփոխումներ

Գործող. 1. Հիմնվելով 2005թ. տեղական ընտրությունների արդյունքների ու փորձի վրա՝ շարունակել ուսումնասիրել ընտրական օրենսդրությունը եւ վարչարարական կառույցները՝ պարզելու դրանց լիարժեք համապատասխանությունը ԵԽ չափանիշներին:

Գործող. 2. Հաշվի առնելով քննության արդյունքները եւ ԵԽ ու ԵԱՀԿ խորհրդատվությունը՝ համապատասխանաբար փոփոխել օրենսդրությունը եւ վարչարարական կառույցները:

1.3.2. Ընտրական բարեփոխումների իրականացում

Գործող. 1. Լրամշակված Ընտրական օրենսգրքի համաձայն իրագործել ընտրական հանձնաժողովների կազմին առնչվող նոր սկզբունքներն ու կանոնները:

Գործող. 2. ԵԽ եւ ԵԱՀԿ համապատասխան խորհրդատվության համաձայն շարունակել կատարելագործել ընտրական գործընթացը:

1.3.3. 2005թ. նոյեմբերին նախատեսված վերանայված Սահմանադրության ազգային հանրաքվեից հետո ակտիվորեն շարունակել պետական կառույցների, վարչարարական կառավարման եւ արդարադատության բարեփոխումները

Գործող. 1. Շարունակել իշխանության տարբեր ճյուղերի իրավասությունների սահմանումը եւ նրանց միջեւ փոխգործակցության կատարելագործումը:

Գործող. 2. Երաշխավորել դատավորների իրական անկախությունը:

Գործող. 3. Երեւանի քաղաքապետի պաշտոնը դարձնել ընտրովի:

1.3.4. Ավելի թափանցիկ եւ մատչելի իրավական գործընթացի ապահովման նպատակով իրականացնել օրենսդրական բարեփոխում

Գործող. 1. Սահմանել իրավական համակարգի բարեփոխումների գործողության ծրագիր՝ այնտեղ ընդգրկելով աշխատավարձերի վերանայումը, ուսուցումը եւ մոնիտորինգը:

-Գործընկերների (գործընկեր կազմակերպությունների) հետ համագործակցությամբ շարունակել վերանայել համապատասխան օրենսդրությունը (նախագծերը ներառյալ):

- Նույնականացնել այն օրենքները, որոնք պետք է վերափոխվեն միջազգային չափանիշների համաձայն:

Գործող. 2. Իրականացնել գործողության ծրագիրը, որը կներառի Դատավորների դպրոցի հիմնադրումը:

1.3.5. Զարգացնել պաշտպանության ոլորտի արդյունավետ եւ թափանցիկ օրենսդրական եւ դատական վերահսկողություն՝ ներառյալ պահանջվող իրավական գործընթացների իրականացման համար անհրաժեշտ համապատասխան կարգավորումները:

Գործող.1. Օպտիմալացնել օրենսդրության դերը պաշտպանական գործունեության վերահսկման գործում՝ ընդլայնելով ԱԺ Պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի, ինչպես նաեւ Ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերով մշտական հանձնաժողովների մասնակցությունը:

Գործող. 2. Քայլեր կատարել խորհրդարանականների եւ իրենց աշխատակազմերի կող-

մից պաշտպանական գործունեության վերահսկման հատուկ կրթական եւ ուսումնական ծրագրերի ընդլայնման ուղղությամբ:

Գործող. 3. Հիմնել ներկայացուցչության եւ բողոքարկման իրավունքներ:

Գործող. 4. Հիմնել զինվորական անձնակազմի բողոքներով զբաղվող օմբուդսմենի համակարգ:

Գործող. 5. Վերանայել գործող զինվորական կարգապահական կանոնադրությունը:

1.3.6. Ապահովել մամուլի, խոսքի եւ հանրահավաքների ազատությունը:

Գործող. 1. Ապահովել վերջերս ընդունված «Հանրահավաքների ազատության մասին» օրենքի իրագործումը՝ հաշվի առնելով ԵԽ խորհրդատվությունը: Մեծացնել փոփոխված օրենքում ամրագրված կանոնների ու սկզբունքների իմացությունը քաղաքացիական հասարակության եւ պետական իշխանությունների կողմից (Օրենքը փոփոխվել է 2005թ. հոկտեմբերի 4-ին: Եվրոպայի Խորհրդի որոշակի առաջարկներ հաշվի են առնվել):

1.3.7. ԵԽ-ի, ԵԱՀԿ-ի եւ այլ համապատասխան միջազգային մարմինների հետ ապահովել մարդու իրավունքների մասին օրենսդրության ու պրակտիկայի համապատասխանությունը միջազգայնորեն ճանաչված չափանիշներին:

Գործող. 1. Հիմնել մարդու իրավունքների երաշխավորման պարզ եւ թափանցիկ մեխանիզմ: Մշակել օմբուդսմենի նշանակման թափանցիկ եւ վստահելի նախնական ընթացակարգ:

Գործող. 2. Ապահովել մարդու իրավունքներին առնչվող միջազգային պարտավորությունների կատարումը:

Գործող. 3. Մարդու իրավունքների առնչությամբ միջազգային պարտավորություններին ու միջազգային չափանիշներին համապատասխանությունը որոշելու նպատակով՝ պատասխանատվությամբ վերանայել առկա օրենսդրությունը:

Գործող. 4. Ընդունել անհրաժեշտ օրենքներ եւ պրակտիկա:

- Գործընկերների (գործընկեր կազմակերպությունների) հետ համատեղ իրագործել այն առաջարկները, որոնք մշակվել են Եվրախորհրդի մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից իրականացված ՀՀ օրենսդրության համատեղելիության որոշման ուսումնասիրությունների ընթացքում:

Գործող. 5. Իրականացնել հասարակական պաշտոնյաների շրջանում մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված կրթական ծրագրեր:

1.3.8. Պայքար կոռուպցիայի դեմ

Գործող. 1. Ակտիվորեն մասնակցել ԳՐԵԿՈ-ի միջոցառումներին եւ իրականացնել ԳՐԵԿՈ-ի հակակոռուպցիոն առաջարկները:

Գործող. 2. Իրականացնել Կառավարության հակակոռուպցիոն ռազմավարությունը եւ գործողության ծրագիրը:

Գործող. 3. Հասարակական պաշտոնյաների համար հիմնել կոռուպցիայի վերաբերյալ պարզ եւ թափանցիկ հաշվետվության մեխանիզմ:

Գործող. 4. Հասարակական պաշտոնյաների ուսուցման եւ կրթության ընդլայնման միջոցով կատարելագործել կոռուպցիայի վերաբերյալ իրազեկությունը:

1.4 Ճգնաժամերի կառավարման կարգավորումներ

1.4.1. Ընդլայնել ճգնաժամերի կառավարման հարցում Հայաստանի ընդհանուր կարողությունները եւ գերատեսչությունների համատեղ գործունեության համակարգումը:

Գործող. 1. Քննության առնել ճգնաժամերի կառավարման վերաբերյալ Հայաստանում գործող համակարգն ու ընթացակարգը:

Գործող. 2. Շարունակել կատարելագործել ճգնաժամերի կառավարման ազգային համակարգն ու գերատեսչությունների համատեղ գործունեության համակարգման ընթացակարգերը:

Գործող. 3. Ստեղծել իրավիճակային կենտրոն:

1.5 Պայքար ահաբեկչության եւ կազմակերպված հանցավորության դեմ

1.5.1. Ընդլայնել Հայաստանի կարողություններն ահաբեկչության դեմ պայքարում, այդ թվում նաեւ ահաբեկչության հետեւանքով ստեղծված ճգնաժամերի կառավարման ուղղությամբ:

Գործող. 1. Կատարելագործել ահաբեկչության դեմ պայքարում միջգերատեսչական համագործակցությունը՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավիճակային կենտրոնին վերապահված իրավասությունների:

Գործող. 2. Ընդլայնել հակաահաբեկչական եւ ահաբեկչության հետեւանքների վերացման գործընթացի կառավարման ազգային կարողությունները:

Գործող. 3. Կենսագործել միջազգային հակաահաբեկչական կոնվենցիաները եւ այլ միջազգային իրավական լծակները:

Գործող. 4. Բարելավել փոխգործակցությունը ռազմական եւ հատուկ հակաահաբեկչական ստորաբաժանումների միջեւ, նախապատրաստել դրանք ՆԱՏՕ-ի ղեկավարած գործողություններին հնարավոր մասնակցության համար:

1.5.2. Նպաստել «Ահաբեկչության դեմ Գործընկերության գործողության ծրագրի» շրջանակներում իրականացվող ԵԱԳԽ հակաահաբեկչական միջոցառումների իրականացմանը

Գործող. 1. Կապ հաստատել եւ տեղեկատվություն փոխանակել ՆԱՏՕ-ի հետ՝ Հետախուզական փոխգործողության ստորաբաժանման միջոցով:

- Հետախուզության բնագավառում զարգացնել փոխվստահությունը ՆԱՏՕ-ի եւ Հայաստանի միջեւ՝ ստեղծելով ու պահպանելով մշտական հարաբերություններ եւ նշանակելով Հակահետախուզական փոխգործողության ստորաբաժանման հետ Հայաստանի շփման պատասխանատու, որը պատասխանատու կլինի ազգային տեսակետների համադրման համար:

- Փոխանակման ծրագրի համար մշակել թեմաների ցուցակ՝ մասնավորեցնելով ահաբեկչության դեմ պայքարում ՆԱՏՕ-Հայաստան համագործակցության ցանկալի ոլորտները, որպեսզի հնարավոր լինի Դաշնակիցներից խնդրել Հայաստանի համար առանձնացնել ու բացել այդ թեմաների վերաբերյալ տեղեկատվությունը եւ հակառակը:

- Բարձրացնել ՆԱՏՕ-ի եւ Հայաստանի պահանջների եւ հետաքրքրությունների վերաբերյալ իրազեկության մակարդակը:

Գործող. 2. Գտնել գործնական տարբերակներ եւ տալ առաջարկներ տեղեկատվության փոխանակման արդյունավետ մեխանիզմների եւ ընթացակարգերի վերաբերյալ:

- Հետախուզական փոխգործողության ստորաբաժանման միջոցով ստեղծել տեղեկատվական հայցագրերի առաքման եւ ստացման ընթացակարգ:

Գործող 3. «Անվտանգություն գիտության միջոցով» ծրագրի ներքո ընդլայնել Հայաստանի գիտական հասարակայնության եւ փորձագիտական ցանցերի ներդրումն ահաբեկչության դեմ պայքարում:

1.5.3. Մշակել միջազգայնորեն ընդունված նորմերին ու պրակտիկային համապատասխանող պաշտպանական տեխնոլոգիաների եւ ռազմական տեխնիկայի արտահանման վերահսկման արդյունավետ ու թափանցիկ կարգավորումներ եւ գործելակերպ:

Գործող. 1. Մշակել համապատասխան աջակցող մեխանիզմներ ու ընթացակարգեր:

Գործող. 2. Ապահովել համապատասխան նորմերի ու պրակտիկայի իրագործմանն առնչվող զինվորական եւ քաղաքացիական անձնակազմի ուսուցումը:

Գործող. 3. Կատարելագործել Հայաստանի կողմից միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ հասարակության իրազեկումը:

1.5.4. Կատարելագործել փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրավական դաշտը:

Գործող. 1. Ձեռնարկել հետագա գործողություններ փողերի լվացման դեմ պայքարի միջոցները եւ մեթոդները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Գործող. 2. ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1378 բանաձեւի համաձայն ձեռնարկել գործնական քայլեր՝ ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ուղղությամբ:

1.5.5. Ընդլայնել Հայաստանի կարողությունները կազմակերպված հանցավորության դեմ պայքարում, այդ թվում դրա հետեւանքով առաջացած ճգնաժամերի կառավարման ուղղությամբ:

Գործող. 1. Կատարելագործել կազմակերպված հանցավորության դեմ պայքարի իրավական դաշտը:

Գործող. 2. Անդրազգային կազմակերպված հանցավորության մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների համաձայն՝ ընդլայնել մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման գործողություններ-

րի պլանը:

1.6 Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողություն

1.6.1. Մշակել պաշտպանական գործունեության ժողովրդավարական վերահսկողության արդյունավետ ու թափանցիկ կարգավորումներ:

Գործող. 1. Վերանայել ԶՈՒ վերահսկման ոլորտում Ազգային ժողովի, Պետության ղեկավարի, Կառավարության, Զինված ուժերի եւ այլ հնարավոր դերակատարների միջեւ ղեկավարման եւ աջակցության պարտականությունների բաժանման առկա կարգավորումները:

Գործող. 2. Անհրաժեշտության դեպքում ընդունել նոր օրենքներ կամ փոփոխել օրենսդրությունը՝ առկա կարգավորումների կատարելագործման եւ պարտականությունների վերասահմանման նպատակով:

1.6.2. Պաշտպանական եւ անվտանգության քաղաքականության մշակմանը գործում քաղաքացիականների մասնակցությանը, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությանը եւ պաշտպանությանն ու անվտանգությանը վերաբերող տեղեկատվության հասարակության հասանելիությանը նպաստելու համար ձեռնարկել արդյունավետ ու թափանցիկ միջոցներ:

Գործող. 1. Քայլեր կատարել խորհրդարանականների եւ նրանց անձնակազմերի ուսուցման կատարելագործման ուղղությամբ:

Գործող. 2. Քաջալերել քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը պաշտպանության եւ անվտանգության խնդիրներում:

1.7 Տնտեսական զարգացում եւ քաղաքականության առաջնահերթություններ

1.7.1. Նպաստել ամուր, կայուն եւ կենսունակ տնտեսության զարգացմանը:

Գործող. 1. Աշխատել Եվրոպական միության հետ հարաբերություններում «Շուկայական տնտեսության» կարգավիճակի ձեռքբերման ուղղությամբ:

Գործող. 2. Կանխել ֆինանսական ռեսուրսների անհարկի օգտագործումը, ներառյալ պաշտոնական դիրքի չարաշահումը:

Գործող. 3. Աշխատել տնտեսության բազմակողմանիության (դիվերսիֆիկացիայի) ապահովման ուղղությամբ:

Գործող. 4. Հարկային եւ մաքսային վարչարարության արդյունավետ բարեփոխման միջոցով ստեղծել կենսունակ գործարար միջավայր՝ արտաքին ուղղակի ներդրումների համար գրավչություն ապահովելու նպատակով:

Գործող. 5. Տարածաշրջանային էներգետիկ ծրագրերին մասնակցության միջոցով ձգտել էներգետիկ ռեսուրսների հասանելիությանը:

Գործող. 6. Էներգիայի մատակարարումների այլընտրանքային աղբյուրների ապահովում եւ էներգիայի նորացված աղբյուրների շարունակական զարգացում:

Գործող. 7. Հետամուտ լինել Հարավային Կովկասի տրանսպորտային ուղիների բացմանը եւ լիարժեք շահագործմանը:

Գործող. 8. Ապահովել օտարերկրյա օժանդակության համապատասխան եւ ռացիոնալ օգտագործումը:

1.8 Համագործակցություն այլ միջազգային կազմակերպությունների հետ

1.8.1. Եվրոպական հարեւանության քաղաքականության շրջանակներում նախապատրաստվել եւ քայլեր ձեռնարկել Եվրոպական Միության հետ ավելի սերտ ինստիտուցիոնալ համատեղելիության ուղղությամբ՝ հետագա անդամակցության հեռանկարով:

Գործող. 1. Ավարտին հասցնել Եվրոպական միության հետ Գործողության ծրագիրը:

Գործող. 2. Իրականացնել Գործողության ծրագիրը:

1.8.2. Քաջալերել Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների գործողությունների փոխլրացումը, նվազեցնել եւ կանխել կրկնակումն ու համընկնումը:

Գլուխ 2. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

2.1 ՁՈՒ ժողովրդավարական վերահսկողություն

2.1.1. Հրամանատարական ուղղահայացի ուսումնասիրություն

Գործող. 1. Որպես կառավարության ծրագրին աջակցություն, ըստ որի Ձևված ՈՒժերը պետք է վերափոխվեն այնպես, որ էլ ավելի համապատասխանեն ժողովրդավարական հասարակարգի արժեքներին, իրականացնել ՊՆ եւ ՁՈՒ ԳՇ ներկայիս հրամանատարական օղակի ու հրամանատարական-վերահսկողական ընթացակարգերի վերանայում՝ միջգերատեսչական հանձնաժողովի համար ապահովելով բարեփոխումների առաջարկներ:

Գործող. 2. Որպես այս վերանայման մաս՝ սահմանել այն պաշտոնները, որոնք կարող են վերափոխվել անձնակազմի քաղաքացիական համալրմամբ:

Գործող.3. Այս վերանայման արդյունքների եւ դրանցից բխող նպատակների իրականացման հիման վրա անհրաժեշտաբար փոփոխել եւ լրացնել օրենսդրությունը:

2.2 Համադրող հանձնաժողովը

2.2.1. Կստեղծվի միջգերատեսչական հանձնաժողով, որը համապատասխան փորձագիտական խմբերի աջակցությամբ, պատասխանատու կլինի Ազգային անվտանգության ռազմավարության եւ Պաշտպանական հայեցակարգի մշակման համար: Այնուհետեւ ռազմավարական փաստաթղթերը կներկայացվեն Անվտանգության խորհրդի հավանությանը եւ ՀՀ Ազգային Ժողովի վերջնական հաստատմանը՝ համաձայն գործող ընթացակարգերի: Այս գործընթացի ընթացքում կիրականացվեն հասարակական քննարկումներ, որոնց կմասնակցեն նաեւ ոչ կառավարական հասարակական կազմակերպությունները:

2.2.2. Ազգային անվտանգության քաղաքականության եւ դրան առնչվող փաստաթղթերի մշակումը

Գործող. 1. Սպառնալիքների վերանայված գնահատմամբ մշակել Ազգային անվտանգության ռազմավարություն, որը նպատակաուղղված կլինի Հայաստանի Հանրապետության ամբողջ անվտանգության ոլորտին:

Գործող. 2. Ազգային անվտանգության ռազմավարության հիման վրա Պաշտպանության նախարարությունը, այլ նախարարությունների համապատասխան փորձագետների եւ ներկայացուցիչների օժանդակությամբ, կմշակի Պաշտպանական հայեցակարգ, որը լայնորեն կսահմանի ՁՈՒ առաքելությունները եւ հաշվի կառնվի Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից: Պաշտպանական հայեցակարգը կսահմանի նաեւ ՁՈՒ բարեփոխումների ուղղվածությունը:

2.2.3. Ռազմավարական պաշտպանական վերանայման իրականացումը

Գործող. 1. Պաշտպանության նախարարությունը կստեղծի նախագծային մարմին, որին կվստահվեն Ռազմավարական պաշտպանական վերանայման համադրումն ու ամենօրյա կառավարումը, ինչպես նաեւ հաստատված պլանների իրագործումը: Անհրաժեշտության դեպքում նախագծման խումբը կարող է օժանդակություն ստանալ փորձագիտական խմբերից, սակայն այն պետք է լինի պաշտպանության նախարարին առաջարկներ ներկայացնող կառույց: Նախագծային խմբում կընդգրկվեն նաեւ այլ, հատկապես Ռազմավարական պաշտպանական վերանայումից ազդեցություն կրող նախարարությունների ներկայացուցիչները:

Գործող. 2.Նախագծային խումբն անհրաժեշտաբար պետք է ստեղծի նաեւ զեկուցման մեխանիզմ, ինչը կապահովի վերանայման առաջընթացին ու արդյունքներին պաշտպանության նախարարի եւ ՁՈՒ անձնակազմի իրազեկությունը: Այն պետք է ՊՆ-ում եւ ԳՇ-ում ծառայություն իրականացնելու համար նաեւ կրթի ու պատրաստի հասարակական կապերի մասնագետներ:

Գործող. 3. Պաշտպանական հայեցակարգի հիման վրա իրականացնել Ռազմավարական պաշտպանական վերանայում, որով կսահմանվեն ՁՈՒ կառույցը, ենթակառույցները (զորամասեր, օդանավակայաններ, շտաբներ) եւ առաջադրանքները՝ նպատակ ունենալով իրականացնել ռազմավարական միջավայրի, սպառնալիքների գնահատման ու հնարավոր ռեսուրսների հիման վրա կազմված Պաշտպանական հայեցակարգի առաքելությունները: Ազգային Ժողովը եւ միջգերատեսչական հանձնաժողովը պետք է իրազեկ լինեն պաշտպանական վերանայման առաջընթացին:

Գործող. 4. Պաշտպանության նախարարությունը նաեւ կմշակի հասարակական իրազեկման ռազմավարություն, որի նպատակը բարեփոխումային ծրագրերի համար քաղաքական եւ

հասարակական աջակցության ձեռքբերումն է եւ Ազգային Ժողովին ու հասարակությանը Ռազմավարական պաշտպանական վերանայման արդյունքների եւ իրականացման ընթացքի մասին տեղեկացումը:

Գործող. 5. Քանի որ Ռազմավարական պաշտպանական վերանայմամբ կարող է ընդունվել անձնակազմի եւ տեխնիկայի թվաքանակի կրճատման որոշում, ապա ստեղծել փորձագիտություն՝ կրճատված անձնակազմի վերապատրաստման եւ նրանց քաղաքացիական կյանք արձակելու, զորամասերի եւ ենթակառույցների փակման, զինամթերքի եւ զինտեխնիկայի ոչնչացման ծախսերի գնահատման համար:

2.2.4. Պաշտպանական պլանավորում եւ բյուջետավորում

Գործող. 1. Ուսումնասիրել պլանավորման եւ բյուջետավորման տարբեր համակարգեր՝ ազգային համակարգի մշակման եւ այս ոլորտում փորձագիտության ձեռքբերման համար: Այս գործընթացում կընդգրկվի նաեւ ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Գործող. 2. Գնահատել պլանավորման եւ բյուջետավորման համակարգի առավելագույն համապատասխանությունը երկրի իրավիճակին եւ ապահովել պլանավորման գործընթացում ընդգրկված բոլոր նախարարությունների եւ համապատասխան այլ կառավարական մարմինների գործունեության ճիշտ համադրումը: Պլանավորման համակարգը պետք է նաեւ նպատակաուղղվի ավելի կայուն պլանավորման հիմունքների ստեղծմանը եւ պետք է հիմնվի հուսալի ֆինանսական պլանավորման վրա: Նոր համակարգը պետք է հաջորդ ֆինանսական տարվա համար ապահովի ժամանակին եւ կայուն բյուջետային կանխատեսում, ինչպես նաեւ վստահելի մոտավոր հաշվարկներ՝ հաջորդ տարիների համար:

Գործող. 3. Ավարտել ավելի թափանցիկ, կատարյալ աուդիտային եւ հաշվապահական ընթացակարգերով ուղեկցվող պլանավորման եւ բյուջետավորման համակարգի ներդրումը, իրականացնել փորձաշրջան եւ ամբողջացնել նոր համակարգի իրականացումը:

Գործող. 4. Ստեղծել պաշտպանական պլանավորման բաժանմունք՝ որպես երկարաժամկետ պլանավորման եւ տեխնիկայի (սարքավորումների) ձեռքբերման հիմնավորման համար անհրաժեշտ «Պահանջների հայտարարագրերի» մշակման պատասխանատու:

2.2.5. Զորահավաքային համակարգ եւ պահեստազորի ուսուցում

Գործող. 1. Ռազմավարական պաշտպանական վերանայման արդյունքների հիման վրա վերանայել եւ փոփոխել ներկայիս զորահավաքային համակարգը՝ դրա արդյունավետության բարձրացման եւ ծախսերի նվազեցման նպատակով:

Գործող. 2 . Ռազմավարական պաշտպանական վերանայման արդյունքների հիման վրա վերանայել պահեստազորային ուժերի թվաչափը եւ դասակարգումը, սահմանել յուրաքանչյուր կարգի համար անհրաժեշտ սպառազինության եւ ուսուցման ծախսերն ու ծառայությունները:

2.3 Ռազմական փոխգործունակություն

2.3.1. Մեկ խաղաղապահ գումարտակի կազմավորում

Գործող. 1. Շարունակել խաղաղապահ գումարտակի կազմավորումը՝ օգտագործելով ՆԱՏՕ-ի չափանիշները:

Գործող. 2. Ներդնել մեխանիզմներ, որոնք ապահովում են ՆԱՏՕ-ի չափանիշների կիրառումը ՆԱՏՕ-ի ղեկավարած ԳԻՄ գործողությունների համար հայտարարված ստորաբաժանումներում:

Գործող. 3. Կատարելագործել գումարտակի մարտական ծառայությունների ապահովումը (թիկունքային՝ սնունդ, մատակարարումներ, պահպանում, վերանորոգում, ինչպես նաեւ բժշկական աջակցություն, ՌՔԿ պաշտպանություն եւ ռազմական ոստիկանություն), որպեսզի այն ունակ լինի երկու տարվա ընթացքում ռոտացիաներով տեղաբաշխել եւ պահպանել առնվազն մեկ վաշտ:

Գործող. 4. Ստորաբաժանումների կազմավորման եւ ուսուցման ընթացքում ձեռք բերված փորձն օգտագործել որպես կատալիզատոր՝ ուսուցման կատարելագործման եւ ԶՈՒ այլ ստորաբաժանումների աստիճանական վերափոխման ապահովման համար:

2.3.2. Մեկ խաղաղապահ բրիգադի կազմավորում

Գործող. 1. Ստեղծել մեկ խաղաղապահ բրիգադ՝ օգտագործելով ՆԱՏՕ-ի չափանիշները:

Բրիգադի մարտական ծառայությունների ապահովումը (թիկունքային՝ սնունդ, մատակարարումներ, պահպանում, վերանորոգում, ինչպես նաեւ բժշկական աջակցություն, ՌՔԿ պաշտպանություն եւ ռազմական ոստիկանություն) պետք է հնարավորություն տա, որ բրիգադն ունակ լինի երկու տարվա ընթացքում ռոտացիաներով տեղաբաշխել եւ պահպանել մեկ գումարտակ:

2.3.3. Ինքնագնահատողների խումբ

Գործող. 1. Օպերատիվ կարողությունների հայեցակագի շրջանակներում ստեղծել ինքնագնահատողների մեկ խումբ՝ ՆԱՏՕ-ի ղեկավարած ԳԻԽ գործողությունների համար հայտարարված ստորաբաժանումների ինքնագնահատման համար՝ որպեսզի այս ստորաբաժանումները կարողանան սերտիֆիկացվել ՆԱՏՕ-ի համապատասխան մեխանիզմների միջոցով:

2.3.4. Զորավարժությունների պլանավորում

Գործող. 1. Օպերատիվ կարողությունների հայեցակարգով ինքնագնահատումներին, խաղաղապահ գումարտակի, իսկ այնուհետեւ խաղաղապահ բրիգադի կարողությունների շարունակական զարգացմանը եւ ՆԱՏՕ/ԳԻԽ զորավարժությունների պլանավորման փուլում ավելի ակտիվ ներգրավվածությանն աջակցելու նպատակով, պատրաստել զորավարժությունների պլանավորող մասնագիտությամբ սպաներ եւ ստանալ անհրաժեշտ խորհրդատվություն:

2.3.5. Գործողությունների օպերատիվ պլանավորում

Գործող. 1. Խաղաղապահ գործողությունների պլանավորման գործընթացին ավելի ակտիվ մասնակցության եւ ՆԱՏՕ-ի շտաբային տարրերում շտաբային սպաների նշանակման նպատակով անհրաժեշտ փորձագիտական խորհրդատվության ստացում:

2.4 Անձնակազմի ուսուցում եւ կառավարում

2.4.1. Ավագ սպայակազմի դասընթացների զարգացում

Գործող. 1. Մշակել ավագ սպաների՝ գնդի եւ բրիգադի հրամանատարական պաշտոնների ստանձնումը նախապատրաստելու ուսումնական ծրագրեր եւ դասընթացներ եւ նվազեցնել կախումը օտարերկրյա ուսումնական հաստատություններից:

Գործող. 2. Կատարելագործել դասախոսական կազմը, որը ավագ սպաների համար կապահովի գնդի եւ բրիգադի հրամանատարական մակարդակի ուսուցում:

Գործող. 3. Որոշել այս դասընթացների համար անհրաժեշտ ենթակառույցները եւ սարքավորումները:

Գործող. 4. Որոշել այս դասընթացների մշակման եւ իրականացման համար անհրաժեշտ մոտավոր ծախսերը:

2.4.2. Կրթական համակարգի վերանայում

Գործող. 1. Խորհրդատվության ստացում՝ կրտսեր սպայական կազմի կրթական ծրագրի կատարելագործման համար:

Գործող. 2. Խորհրդատվության ստացում՝ ենթասպայական կազմի կրթական ծրագրի կատարելագործման համար:

Գործող. 3. Խորհրդատվության ստացում՝ սերժանտական կազմի կրթական ծրագրի կատարելագործման համար:

2.4.3. Ուսումնական ծրագիր

Գործող. 1. ՋՈՒ տարբեր զորատեսակների համար մշակել նոր, ստանդարտ տարեկան ուսումնական ծրագիր եւ ստեղծել գնահատման մի մեխանիզմ, որը կբացահայտի թե որքանով են իրականացվել սահմանված չափանիշները:

Գործող. 2. Մշակել ուսումնական ծրագիր ցամաքային ուժերի, ավիացիայի եւ ՀՕՊ զորքերի գումարտակային մակարդակի ստորաբաժանումների համար:

2.4.4. Անձնակազմի կառավարման համակարգի բարեփոխումներ

Գործող. 1. Գործող համակարգի կատարելագործման նպատակով ստանալ որոշակի հաստիքներում պարտականությունների իրականացման համար անհրաժեշտ որակավորման եւ ուսուցման չափանիշների (արտերկրում ստացած ուսուցումը ներառյալ), յուրաքանչյուր հաստիքի հստակ աշխատանքային գործառույթների մշակման, յուրաքանչյուր հաստիքում ծառայության տեւողության, նոր հաստիքի չնշանակվելու դեպքում նախքան զորացրումը կոչումների կրման տեւողության վերաբերյալ խորհրդատվություն:

Գործող. 2. Ստեղծել ստանդարտ ֆինանսական բավարարման (աշխատավարձերի) դա-

սակարգում՝ ըստ հաստիքների (զինվորական եւ քաղաքացիական անձնակազմերի համար), ինչպես նաեւ սահմանել հավելավճարների հատկացման սանդղակ՝ հատուկ որակավորումների առկայության կամ հատուկ պարտականությունների իրականացման դեպքում, մշակել կրթական եւ ուսումնական չափանիշներ, որի շնորհիվ կապահովվի ռազմական որակավորումների ճանաչումը քաղաքացիական կրթական համակարգում, սահմանել զորացրման, վերաբնակության եւ զորացրված անձնակազմի սոցիալական հատկացումների (այդ թվում կենսաթոշակների) իրականացման ընթացակարգեր:

Գործող. 3. Կատարելագործել անձնակազմի համապատասխան փորձի եւ հմտությունների որոշման գործող համակարգը՝ անձնակազմի ծառայողական առաջխաղացման եւ նոր պաշտոնների նշանակման կարգի ու չափորոշիչների բարելավման նպատակով:

Գործող. 4. Կատարելագործել սպաների, սերժանտական կազմի, զինվորների եւ քաղաքացիական անձնակազմի գնահատման գործող համակարգը, որը ընտրության հիմք կլինի պահանջներին համապատասխանող ծառայողների առաջխաղացման համար՝ այդպիսով հասնելով առավելագույն թափանցիկության եւ արդարության: Այս համակարգի շնորհիվ անձնակազմը կըմբռնի, թե ինչ է իրենից ակնկալվում եւ ինչ պետք է անի՝ հմտությունների զարգացման համար:

2.4.5. Լեզվի ուսուցում

Գործող. 1. Կատարելագործել լեզվի ուսուցման կարողությունները Ռազմական Ակադեմիայում:

Գործող. 2. Կատարելագործել լեզվի եւ ռազմական տերմինաբանության ուսուցումը խաղաղապահ ստորաբաժանումում

Գործող. 3. Անձնակազմի համար լեզվի լրացուցիչ ուսուցման նպատակով շարունակել օգտագործել երկկողմ օժանդակությունը

Գործող. 4. Ստեղծել լեզվի ուսումնական կենտրոն:

Մշակել լեզվի մասնագիտացված ուսուցման դասընթաց՝ ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններում ընդգրկված ավագ սպայական կազմի եւ գեներալների համար:

Գործող. 5. Համապատասխան անձնակազմի համար հիմնել անգլերեն լեզվի տեստավորման համակարգ՝ համաձայն ՍՏԱՆԱԳ 6001-ի:

2.5 Հրամանատարության, վերահսկողության եւ թիկունքային ապահովման երկարաժամկետ ծրագրեր

Գործող. 1. Օգտագործելով Ռազմավարական պաշտպանական վերանայման արդյունքները՝ մշակել հրամանատարության-վերահսկողության-կապի (ՀՎԿ) երկարաժամկետ ծրագիր եւ սահմանել ՀՎԿ համակարգերի կառուցվածք (ներառելով կապի, նավիգացիայի, իդենտիֆիկացիայի եւ ավտոմատացված տեղեկատվական համակարգերը, ինչպես նաեւ դրանց ֆունկցիոնալ ծառայությունները), ինչն անհրաժեշտ է Ռազմավարական պաշտպանական վերանայման միջոցով մատնանշված օպերատիվ պահանջներին համապատասխանելու համար: Այս խնդիրների իրականացմանն օժանդակելու նպատակով Հայաստանը կաջակցի ՆԱՏՕ-ի Խորհրդակցությունների, հրամանատարության եւ վերահսկողության գործակալության (NC3A) ՆԱՏՕ-ի ցանցային կարողությունների իրագործման ու փոխգործունակության ենթակոմիտեի (NNEC & Interoperability Sub-group) միջոցառումներին, կմասնակցի ՆԱՏՕ-ի եւ Կոալիցիայի կապի ու տեղեկատվական համակարգերի փոխգործունակության տեստավորման միջոցառումներին եւ փորձագիտական աջակցություն կստանա ՆԱՏՕ-ի Խորհրդակցությունների, հրամանատարության եւ վերահսկողության գործակալությունից (NC3A):

Գործող. 2. Օգտագործելով Ռազմավարական պաշտպանական վերանայման արդյունքները՝ մշակել թիկունքային (ներառյալ բժշկական) ապահովման երկարաժամկետ ծրագիր, ինչն անհրաժեշտ է Ռազմավարական պաշտպանական վերանայման միջոցով մատնանշված օպերատիվ պահանջներին համապատասխանելու համար:

Գործող. 3. Աստիճանական զարգացմամբ իրականացնել անհրաժեշտ տեխնիկայի ձեռքբերում եւ արդիականացում՝ յուրաքանչյուր փուլում ցուցադրելով նոր կարողություն եւ փոխգործունակություն:

2.6 Ազգային ռազմարդյունաբերական համալիրը եւ պաշտպանությանը դրա համա-

պատասխանությունը

Գործող. 1. Իրականացնել առկա ռազմարդյունաբերական համալիրի գնահատում՝ դրա օգտակարությունն ու պաշտպանությանը համապատասխան լինելը որոշելու նպատակով:

Գործող. 2. Ապահովել դրա հնարավոր վերակազմման կամ կազմալուծման վերաբերյալ առաջարկներ:

2.7 Սահմանային անվտանգություն

Գործող. 1. Դաշինքի անդամ եւ (կամ) գործընկեր երկրների հետ համագործակցությամբ իրականացնել սահմանային անվտանգության կառույցում առկա ընթացակարգերի եւ պրակտիկայի հետազոտում:

Գործող. 2. Այդ հետազոտման արդյունքների հիման վրա որոշել սահմանային անվտանգության արդյունավետության բարձրացման համար փոփոխման ենթակա ընթացակարգերն ու պրակտիկան: Նույն հետազոտման հիման վրա որոշել առաջնային, այդ թվում ԶՈԶ կոմպոնենտների հայտնաբերման սարքավորումները, որոնք անհրաժեշտ է արդիականացնել կամ ձեռք բերել՝ սահմանային անվտանգության կատարելագործման նպատակով:

Գործող. 3. Կազմել առաջնային համարվող սարքավորումների արժեքի մոտավոր հաշվարկներ եւ անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման գործում օժանդակության համար դիմել Դաշինքի անդամ կամ գործընկեր երկրներին կամ էլ օգտագործել ազգային միջոցները:

Գլուխ 3. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

3.1 Հասարակական տեղեկատվություն անվտանգության եւ պաշտպանության վերաբերյալ

3.1.1. Մշակել Ազգային տեղեկատվական ռազմավարություն Հայաստան-ՆԱՏՕ գործողությունների ծրագրի վերաբերյալ՝ որպես պաշտպանական եւ անվտանգության բարեփոխումների աջակցություն

Գործող. 1. - Զարգացնել տեղեկատվական արշավ.

- Միջգերատեսչական հանձնաժողովում ստեղծել հասարակական տեղեկատվության հատուկ հանձնախումբ,
- Կանոնավոր կերպով պատրաստել եւ հեռարձակել ռադիո-հեռուստատեսային հաղորդումներ ՆԱՏՕ-ի վերաբերյալ,
- Կատարելագործել ՊՆ հասարակական տեղեկատվության մասնագետների կարողությունները՝ նրանց վերապատրաստման միջոցով:

3.1.2. Ընդլայնել հասարակության իրազեկությունը ՆԱՏՕ-ի վերաբերյալ

Գործող. 1. Երեւանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի բացում:

Գործող. 2. ՆԱՏՕ-ի գրքային ստենդերի բացում մարզերի համալսարաններում:

Գործող. 3. - ՆԱՏՕ-ի Հասարակական դիվանագիտության տնօրինության հետ համատեղ կազմակերպել սեմինարներ, աշխատաժողովներ եւ համաժողովներ՝ հատուկ լսարանի համար (տեղական իշխանություններ, համալսարաններ, լրագրողներ, հասարակական կազմակերպություններ):

- Հայաստանում կազմակերպել «ՆԱՏՕ-ի շաբաթ»:

3.2 Գիտություն, Հասարակության արդի մարտահրավերների կոմիտե

3.2.1. «Անվտանգություն գիտության միջոցով» ծրագրի ներքո կազմակերպված միջոցառումների միջոցով կենտրոնանալ կարեւորագույն անվտանգության առաջնահերթությունների վրա:

3.2.1.1. Նպաստել Հարավային Կովկասում առավել անվտանգությանն ու կայունությանը՝ «Անվտանգություն գիտության միջոցով» ծրագրի շրջանակներում համագործակցելու միջոցով:

Գործող. 1. Շարունակել մասնակցությունը «Վիրտուալ մետաքսե ճանապարհ» նախագծին՝ կենտրոնանալով Հայաստանում եւ Հարավային Կովկասի այլ երկրներում համակարգչա-

յին ու գիտահետազոտական ցանցերի ընդլայնման վրա:

Գործող. 2. «Գիտություն հանուն խաղաղության» նախագծի զարգացման նպատակով տարածաշրջանային ու ՆԱՏՕ-ի անդամ երկրների փորձագետների եւ ՆԱՏՕ-ի քարտուղարությունների հետ աշխատանքներ իրականացնել ազգային եւ տարածաշրջանային սեյսմիկ անվտանգության ապահովման ուղղությամբ:

Գործող. 3. Շարունակել մասնակցել Հարավային Կովկասի «Գետերի մոնիտորինգ» նախագծին՝ լուծելու ջրային պաշարների կառավարման կրիտիկական խնդիրները:

Գործող. 4. Իրականացնել տարածաշրջանային համագործակցության միջոցառումներ՝ կենտրոնանալով Հարավային Կովկասում մարդկանց առողջության ռիսկային գործոններին առնչվող խնդիրների վրա:

3.2.1.2. Կոնկրետ համագործակցային միջոցառումների միջոցով արձագանքել Հայաստանի ազգային գիտությանը եւ տեխնոլոգիական առաջնայնություններին:

Գործող. 1.Իրականացնել համագործակցության միջոցառումներ՝ կենտրոնանալով բիոահաբեկչության սպառնալիքի վրա:

Գործող. 2.Իրականացնել համագործակցության միջոցառումներ՝ նպաստելով Հայաստանում սննդի շղթայի անվտանգությանը:

Գործող. 3.Իրականացնել համագործակցության միջոցառումներ՝ Հայաստանում տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների փորձագիտության ընդլայնման նպատակով:

3.2.2 Հասարակության արդի մարտահրավերների կոմիտեի հովանու ներքո իրականացնել տարածաշրջանային եւ ազգային միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն Հայաստանի հիմնական առաջնահերթություններին:

Գործող. 1.Տրանսսահմանային կոնտեքստում շրջակա միջավայրի վրա աղտոտման ազդեցության գնահատման իրականացման նպատակով մասնակցել «Տրանսսահմանային կոնտեքստում թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա» թեմայով նախնական ուսումնասիրություններին՝ հաշվի առնելով բնապահպանության վերաբերյալ առկա միջազգային կոնվենցիաները:

Գործող. 2.Ընդլայնել Հայաստանի փորձագետների մասնակցությունը Հասարակության արդի մարտահրավերների կոմիտեի (CCMS) ընթացիկ միջոցառումներին:

3.3 Քաղաքացիական ճգնաժամերի կառավարում եւ ճգնաժամային պատրաստականություն

3.3.1. Ճգնաժամային պատրաստականության կատարելագործում

Գործող. 1. Հիմնվելով ռիսկերի ճիշտ գնահատման վրա՝ մշակել ռադիոլոգիական, քիմիական, կենսաբանական եւ միջուկային ճգնաժամերին ու ահաբեկչական գործողություններին արձագանքելու ծրագրեր: Քաղաքացիական աղետների պլանավորման գործողությունների ծրագրի իրականացումը փրկարարական ծառայությանը թույլ կտա արդյունավետորեն արձագանքել բոլոր աղետներին եւ ապահովել սեփական քաղաքացիների, օտարերկրյա ներկայացուցիչների ու միջազգային կազմակերպությունների անձնակազմերի անվտանգությունը:

Գործող. 2. Ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում կազմակերպվող համատեղ աշխատաժողովների, զորավարժությունների եւ դասընթացների միջոցով ընդլայնել աղետների արձագանքման ուժերի մասնագիտական պատրաստականությունը՝ նպատակ ունենալով Հայաստանի փրկարարական համակարգը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին եւ կարողանալ տրամադրել միջազգային փրկարարական օժանդակություն:

Գործող. 3. - Իրականացնել փորձի փոխանակում տարատեսակ քաղաքացիական աղետների կառավարման տարբեր ոլորտներում,

-Պահանջվող մակարդակի օպերատիվ պատրաստականության ու փոխգործունակության հասնելու նպատակով մասնակցել ՆԱՏՕ-ի կողմից կազմակերպվող զորավարժություններին,

-Փրկարարական համակարգի անձնակազմի համար կազմակերպել անգլերենի դասընթացներ:

3.3.2. Ճգնաժամերի արձագանքման համակարգի կատարելագործում

Գործող. 1. Ձեւավորել քաղաքացիական ճգնաժամերի կառավարման տեղեկատվական

համակարգ, որը կհանդիսանա աղետների կամ քաղաքացիական ճգնաժամերի արձագանքման ռեսուրսների լծակ եւ համադրման մեխանիզմ՝ իր մեջ ներառելով տեղեկատվական հոսքի մշակումը, կանոնակարգումը եւ կառավարումը՝ այդպիսով այդ ռեսուրսները դարձնելով ավելի հասանելի:

Գործող. 2. Ստեղծել համաճարակներին արձագանքելու համակարգ՝ հիմնվելով գոյություն ունեցող բժշկական հաստատությունների տեխնիկական եւ մարդկային ռեսուրսների վրա: Մասնակցել աշխատաժողովների, դասընթացների եւ հանդիպումների այն երկրներում, որոնք ունեն նմանատիպ արձագանքման համակարգ:

Գործող. 3. Կատարելագործել կապերն ու փոխգործունակությունը Աղետների արձագանքման համադրման Եվրոատլանտյան կենտրոնի հետ եւ արդիականացնել ՌՔԿ արձագանքման կարողությունների ազգային գույքը:

3.3.3. Ճգնաժամային կապ

Գործող. 1. Վերանայել ճգնաժամային իրավիճակներին վերաբերող պետական տեղեկատվական քաղաքականությունը եւ մանրամասն ծրագրերը:

Գործող. 2. Զարգացնել ճգնաժամերի արձագանքմանը վերաբերող տեղեկատվության հավաքման եւ վերլուծության միջոցառումները, քաղպաշտպանության վերաբերյալ բնակչության տեղեկացման ռազմավարությունը, հնարավոր պատահարների ոլորտում ՆԱՏՕ-ի եւ ՆԱՏՕ/ԳԻԽ առկա նախագծերի վերաբերյալ հասարակական իրազեկությունը եւ ընդլայնել հասարակական պատրաստականությունը:

Գործող. 3. Միջազգային փորձի հիման վրա մեկնարկել է մի ծրագիր՝ նպատակ ունենալով ստեղծել «Արտակարգ ալիք» տեղեկատվական կենտրոն, որը ամբողջ համապատասխան տեղեկատվությունն ու աղետների արձագանքման վերաբերյալ իրազեկումը կինտեգրացնի մեկ մասնագիտացված կառույցում: Արտակարգ իրավիճակներում այս կառույցը բնակչությանը, զանգվածային լրատվության միջոցներին եւ կառավարությանը կտրամադրի վստահելի ու հրատապ տեղեկատվություն: «Արտակարգ ալիք» տեղեկատվական կենտրոնը ներառում է տեղեկատվական կենտրոն, ինտերնետային կայք, հեռուստատեսային եւ ռադիո ընկերություն եւ օրաթերթ:

Գլուխ 4 . ՎԱՐՉԱԿԱՆ,«ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ» ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

4.1 Վարչական խնդիրներ

4.1.1. Համադրման, փոխգործողության եւ աջակցող ծրագրերի համահունչ ղեկավարման միջոցով ապահովել ԱԳԳԾ արդյունավետ իրագործում:

Գործող. 1. Պատասխանատու մարմնի միջոցով ապահովել համապատասխան միջգերատեսչական համադրում:

Գործող. 2. Համապատասխան մակարդակներում ապահովել փոխգործողություն ՆԱՏՕ-ի, այդ թվում ՆԱՏՕ-ի կոնտակտային դեսպանության հետ եւ աշխատանքային պայմաններ ապահովել ՆԱՏՕ-ի փոխգործողության պաշտոնյայի համար:

Գործող. 3. Նախատեսել հայ սպաների նշանակում ՆԱՏՕ-ի Միջազգային քարտուղարությունում (ներառյալ Աղետների Եվրոատլանտյան արձագանքման համադրման կենտրոնում) եւ Միջազգային ռազմական շտաբի Գործընկերության համադրման օղակներում:

Գործող. 4. Նշանակել Հայաստանի փոխգործողության ներկայացուցիչ Դաշնակցային վերափոխումների հրամանատարությունում:

4.2 Ռեսուրսներ

4.2.1. Ապահովել ԱԳԳԾ աջակցման ծրագրերի եւ միջոցառումների համապատասխան ֆինանսավորումը

Գործող. 1. Նախատեսել եւ հատկացնել համագործակցության այս ծրագրի իրականացման համար պահանջվող ֆինանսական ու մարդկային ռեսուրսները:

4.3 Պաշտպանողական անվտանգություն

4.3.1. Լիովին իրականացնել Հայաստանի կառավարության եւ ՆԱՏՕ-ի միջեւ ստորագր-

ված անվտանգության վերաբերյալ համաձայնագիրը:

Գործող. 1. - Պահպանել Հայաստանի իշխանությունների եւ ՆԱՏՕ-ի միջեւ ստորագրված «Անվտանգության մասին» համաձայնագրով պահանջվող ՆԱՏՕ-ի անվտանգության նվազագույն չափանիշները:

- Տեղեկատվության հոսքին եւ պահանջներին համապատասխան շարունակել ընդլայնել գոյություն ունեցող ռեգիստրային համակարգը:
- Շարունակել սահմանել այն պաշտոնները, որոնց համար պահանջվում է ՆԱՏՕ-ի գաղտնիության թույլտվություն:

Գործող. 2. Ազգային անվտանգության ծառայության աշխատանքի կատարելագործման նպատակով ընդլայնել համագործակցությունն այլ երկրների համապատասխան ծառայությունների հետ:

- ՆԱՏՕ-ի գաղտնի տեղեկատվությամբ աշխատող հայ փորձագետների համար հիմնել ու իրականացնել անվտանգության վերաբերյալ կրթական եւ ուսումնական ծրագրեր՝ նպատակ ունենալով կատարելագործել ԱԱԾ ընդհանուր աշխատանքը:

Գործող. 3. Ստեղծել տեղեկատվության կրիպտոգրաֆիկ պաշտպանության էլեկտրոնային համակարգեր, ցանցեր եւ կապուղիներ:

Ձեռնարկը պատրաստվել եւ հրատարակվել է
«Տրանսպորտային Նախաձեռնությունների Հայկական Կենտրոն»
հասարակական տեղեկատվական կազմակերպության կողմից:

Հասցեն՝ ք. Երեւան, Ձաքյան փ. 8. Հեռ. /010/ 566 448

Վաճառքի համար նախատեսված չէ: